

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 23/1

17 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Գրանդ Թրեյդ» ՍՊԸ 24.09.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 18.09.2014 թ-ի թիվ 2033 որոշման դեմ:

«Գրանդ Թրեյդ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Գրանդ Թրեյդ» ՍՊ ընկերությունը, համարվելով ավելացված արժեքի հարկ վճարող, 2012 թ-ի մայիս ամսից դադարեցրել է իր գործունեությունը, ունենալով այդ ժամանակաշրջանում ԱԱՀ-ի գծով 17.760.838 դրամի գերավճար և դեբետային մնացորդ:

Գործունեություն չիրականացնելու ժամանակաշրջանում ընկերությանը չի դադարել համարվել ԱԱՀ վճարող, մասնավորապես.

1. 2012 թ-ին գործող «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Սույն հոդվածով սահմանված ԱԱՀ-ի շեմը չի կիրառվում՝

ե) այն կազմակերպության նկատմամբ, որի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին), ընդ որում, այս դեպքում կազմակերպություններից ոչ մեկի նկատմամբ ԱԱՀ-ի շեմը չի կարող տարածվել...» և

2. «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն. «Շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել՝

4) առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները,

եթե՝

բ. առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է այն անձին, որին միաժամանակ պատկանում է Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը)»:

«Գրանդ Թրեյդ» ՍՊ ընկերության և «Ինտերնեյշնլ Թրեյդ Ջի Սի» ՍՊ ընկերություններն ունեն միակ մասնակից, որին պատկանում է հիշատակված երկու ընկերությունների 100 տոկոս բաժնեմասերը (երկու ընկերությունների կանոնադրություններից արված քաղվածքները կցվում են):

«Գրանդ Թրեյդ» ՍՊ ընկերությունը վերսկսել է իր գործունեությունը 2014 թ-ի մարտի 24-ին և նույն օրը, էլեկտրոնային եղանակով, սահմանված հայտարարություն է ներկայացրել հարկային մարմին ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ, որը կարող

եր և չներկայացնել, քանի որ վերևում հիշատակված օրենքների համաձայն միշտ էլ հանդիսացել է ԱԱՀ վճարող:

Այլ կերպ ասած, ընկերությունը 2014 թ-ին, գործունեությունը վերսկսելուց, արդեն իսկ ունեցել է ԱԱՀ-ի գծով գերավճար ու դեբետային մնացորդ և 2014 թ-ի 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկով բյուջե վճարման ենթակա գումարը պետք է հաշվանցվեր ԱԱՀ-ի դեբետային մնացորդից:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62 հոդվածով ընկերությունը առաջարկում է հաստատել վարչական ակտի առ ոչինչ լինելը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետը, քննարկելով «Գրանդ Թրեյդ» ՍՊԸ վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 18.09.2014 թ-ին ընդունել է թիվ 2033 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 18.09.2014 թ-ի դրությամբ «Գրանդ Թրեյդ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև ընկերություն) ԱԱՀ-ի գծով չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 2.279.416 դրամ, որն առաջացել է 2014 թ-ի 2-րդ եռամսյակի հաշվարկից, որը ենթակա է գանձման:

Նշվեց նաև, որ «Գրանդ Թրեյդ» ՍՊԸ կողմից Շենգավիթի ՀՏ դիմում է ներկայացվել 02.05.2012 թ-ից գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ: Ընկերության կողմից գործունեությունը վերսկսել է միայն 24.03.2014 թ-ից: Ընդ որում հարկ է նշել, որ 2012 թ-ին ընկերության իրացման շրջանառությունը կազմել է 30.856.500 դրամ, այսինքն՝ չի գերազանցել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված ԱԱՀ-ի շեմը: Հետևապես, ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 23-րդ հոդվածների դրույթներով ընկերությունը 01.01.2013 թ-ից դադարել է ԱԱՀ վճարող համարվելուց (համարվել է շրջանառության հարկ վճարող), որի հետևանքով 01.01.2013 թ-ի դրությամբ առկա դեբետային մնացորդը՝ գումարով 17.652.200 դրամ, զրոյացվել է:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդմանը, որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի բ) ենթակետի հիմքով ընկերությունը չէր կարող համարվել շրջանառության հարկ վճարող, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանված է շրջանառության հարկ վճարողների շրջանակը: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում շրջանառության հարկ վճարող են համարվում նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանները բավարարող ՀՀ ռեզիդենտ համարվող առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, այդ թվում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) հարկ վճարողները (այսուհետ՝ անձինք): «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները և իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է

փոփոխվի դրա իմաստը: Օրենքի 4-րդ հոդվածում օգտագործվող «անձ» հասկացությունը իրավական առումով ներառում է բացառապես առևտրային կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին և նոտարներին: Այս առումով առավել, քան հստակ է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք չեն ներառվում «անձ» հասկացության մեջ և հոդվածի հետագա շարադրանքում չեն կարող դիտարկվել այդ հասկացության շրջանակներում:

Դա հաստատում է նաև այն հանգամանքը, որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում կատարվեց փոփոխություն, որի համաձայն 2015 թ-ի հունվարի 1-ից Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի բ) ենթակետով նախատեսված դրույթը վերաբերելու է նաև ֆիզիկական անձանց: Ըստ էության, դա է նաև պատճառը, որ ընկերությունը 28.03.2014 թ-ին ներկայացրել է ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, որով խնդրել է 24.03.2014 թ-ից իրեն համարել ԱԱՀ վճարող:

Գանգատում 2012 թ-ին գործող «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ե) կետին կատարված հղման վերաբերյալ հարկ է նշել, որ այն հիմնավոր չէ, քանի որ ընկերությունը դադարել է ավելացված արժեքի հարկ վճարող համարվել 01.01.2013 թ-ից, իսկ այդ պահի դրությամբ գործող «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում վերոգրյալ ե) կետով նախատեսված դրույթն արդեն իսկ չի գործել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ու մ է՝

ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 18.09.2014 թ-ի թիվ 2033 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ